Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

30 JUL 2010

Բժ. Բ. Հ. ՆԱՋԱՐՅԱՆ

ԹՈՔԱԽՏԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵՋ

616.9
Ա-15

ԹՈՔԱԽՏԻ ՅԵՐՈՐՅԱԿ ԱՆԴՐԿ. ՅԵՐԿԱԹԱԳԻՐ ՎԻՐԸ
ԹԻՖԼԻՍ—1925

09 JUL 2013

610
159-ԷԱ

616.3
Գ-15

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԱԿԱՑԱՎԸ
(ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԸ)

1003
10309

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ. Ալեքսանդրապոլ
1922
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ
ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՇԽԱՏԵՑԵՔ ԱՄԵՆԱՑՆ ՏԱՐԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՌԸ ԳՑՈՒՂ ՈՒՂԱՐԿԵԼ:

ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ: ԹՈՔԱԽՏՈՎ, ԱՎԵԼԻ ՀԱՃԱԽ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ:

ՅԵՐԲԵՔ ՉՊԵՏՔ Ե ՀԱՄԲՈՒՐԵԼ ՅԵՐԵԽԱՑԻ ՇՐԹՈՒՆՔՆԵՐԸ:

ՅԵՐԵԽԻՆԵ՛Ր, ԹՈՒՅԼ ՉՏԱՔ ՄԵԾԵՐԻՆ ՀԱՏԱԿԻ ՅԵՎ ԳԵՏՆԻ ՎՐԱ ԹՔԵԼ:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՈՒՄԸ ՊԵՏՔ Ե ԿԱՋՄԻ ՆՈՒՅՆՊԵՍ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ, ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ:

ԱՄ-ԲՀ1

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԱԿԱՑԱՎԸ

Մոտ անցեալում բարակացավը (տուբերկուլոզ) համարվում էր զուտ մեծերի հիվանդություն և վոր այդ ախտը խնայում է մանկական հասակը։



Գերմանական հայտնի գիտնական Ռ. Կոխ, վորին հաջողվեց 1882 թ. գտնել բարակացավի բացիլները

Այդ կարծիքը տիրպետում էր մինչև 1882 թ. յերբ գերմանական հայտնի գիտնական Ռ. Կոխին հաջողվեց գտնել բարակացավի բացիլները։

Բարակացավի բացիլները

Այդ բացիլները պատճառ յեն դառնում մարդկության սոսկալի հիվանդության՝ բարակացավի — Թոքախտի ու իրենցից ներկայացնում յեն մանր ցուպիկներ, վորոնք նկատելի են դառնում միայն խոշորացույցի միջոցով. 400 անգամ մեծացրած։

Բարակացավի բացիլներ խոշորացույցի տակ։

Բարակացավի բացիլի ապրելու ու աճելու համար ամենահարմար պայմաններն են ջերմություն 37/⁰—38/⁰. ավելի բարձր կամ ցածր տաքության աստիճանը մեռցնում է այդ ախտի բացիլները։

Արևի ջերմությունը մահաբեր է համարվում այդ բացիլների համար։ Բարակացավը ավելի տարածված է այն ընտանիքներում, վորոնք ապրում յեն խոնավ, արևից ու առհասարակ լույսից զուրկ բնակարաններում՝ և այդ պատճառով աղքատ ու աշխատավոր դասակարգը ավելի շատ զոհեր է տալիս, քան հարուստ ու բարեկից կեանք ունեցող դասակարգը։

Բարակացավի լավ բարեկամներն յեն համարվում. չքավորությունը, հարբեցողությունը, չարքաշ աշխատանքը և տգիտությունը։

Մատաղ սերնդի ամենամեծ տոկոսն է բռնված այդ ախտով։ Մինչև հինգ տարեկան յերեխաների 43⁰/₀ վարակված է Թոգախտով։ Հինգից մինչև 15 տարեկանը վարակված յեն 90⁰/₀—95⁰/₀, գրեթե ամբողջ մանուկ սերունդը։

Այսպես ուրեմն դեռ չհասունացած ու ամրապնդված մանկական որգանիզմը ամենահամար և դյուրամատչելի պայմանների մեջ է գտնվում բարակացավի տարածման ու զարգացման համար։

Բարակացավի բացիլների վարակման ճանապարհները

Թոքախտի բացիլերները մուտք յեն գործում մանկական որգանիզմի մեջ զանազան ճանապարհներով։

Այսպես որինակ բարակացավի վարակման հաճախ յեն թարկվում յեն շնչառության գործարանները։ Նույնիսկ յեթե յերեխան ապրում է բարեհաջող պայմաններում դարձյալ ապահովված չե Թոքախտի վարակումից, շնորհիվ նրան, որ այդ ախտով վարակված հիվանդներ ամեն տեղ ու ամենուրեք կան, մանավանդ մեծ քաղաքներում, վորտեղ նրանք թքում յեն գետնին, իսկ մենք գիտենք, վոր նրանց խորխը իրեն մեջ պարունակում է ահագին թվով տուբերկուլոզային (բարակացավային) բացիլներ, այդ բացիլները փոշու հետ խառնվում յեն շնչելիք ոդի մեջ և այդպիսով ընկնում մանկան շնչառության գործարանը, կամ թե չե մանկան կերակրող հարազատ մայրը կամ ծծմայրը հիվանդ յեն Թոքախտով և հազալու ժամանակ իրենց խորխի հետ դուրս յեն ցայտեցնում բարակացավի բացիլները վորոնք վարակում են մանուկի շնչելիք ոդը։

Վարակման գլխավոր պատճառներից մեկն ել մանկական հասակում շատ տարածված գեղձախտն է (զոլոտուխան)։ Գեղձախտով յերեխաները շատ հաճախ յեն հիվանդանում նույնպես բրոնխիտով կամ շնչառության ճանապարհների բորբոքումով՝ և այդպիսով լավ հող են պատրաստում բարակացավի բացիլների ներսմուծման մանկան մարմնի մեջ։

Բարակացավի վարակումն կատարվում է նույնպես մարսողական ապարատի միջոցով։ Բարակացավի բացիլները ուտելիքի, կամ ինչպես տեղի է ունենում շատ հաճախ մանկական հասակում, ըմպելիքի հետ են ներս մտնում մանկան որգանիզմը։ Որինակ վարակումը կատարվում է կովի կաթի միջոցով յեթե մանկան կերակրում յեն բարակացավով հի-

վանդ կովի հում կաթով, կամ յեթե մանկան ծնողները հիվանդ յեն լինում բարակացավով և համբուրում յեն մանկան բերանն ու շրթունքները և կամ թուքով թրջում յեն մանկան կերակրելիք (սոսկան) ծծակը, կամ ուտելիք հացը։

Գեղձախտով (զոլոտուխա) հիվանդ յերեխաները։

Վերջապես բարակացավի ախտով վարակումը կատարվում է մարդու մաշկի միջոցով. յեթե վեհջինս լինում է վիրավորված. վերքը ախտավորվում է բարակացավի բացիլներով։ Շատ հաճախ է պատահում, որ փոքր յերեխաները սկսում յեն սողալ գետնի վրա ու յերբեմն ել զանազան տեսակի վերքեր են գոյացնում նրանց վոտքերի, ձեռքերի և մարմնի զանազան մասերում և այդ վերքերը թեև շատ աննշան են, բայց ախտոտվելով հատակի փոշու մեջ, ուր արդեն դուբերկուլոզի բացիլները կան, վերջիններս մտնում յեն վերքերի մեջ ու այն տեղից արդեն անցնում ավշանոթների (лимфатический путь.) միջոցով ու կանգ առնում մոտակայ ավշագեղձերում, որով և առաջ յեն բերում վերջիններիս բորբոքումը։

Բարակացավով հիվանդության տեսակները

Այսպիսով մենք համառոտակի ծանոթացանք բարակացավի բացիլների և մանկական որգանիզմի նրանցով վարակման ճանապարհների հետ։

Այժմս անցնենք բարակացավի այն ձևերին, որոնցով հիվանդանում են մանկական հասակում։

Գեղձային բարակացավ

Ամենա բարերնթացք ու քիչ մահաբեր է յերեխաների գեղձային տեսակի բարակացավով հիվանդությունը, որը առաջ է գալիս նրանից, որ այս կամ այն ճանապարհով բարակացավի բացիլները մուտք են գործում մանկան գեղձերի մեջ, որտեղ կարող են յերկար տարիներ մնալ առանց որև է մի հիվանդություն պատճառելու։ Բայց բավական է, որ մանկան որգանիզմը յենթարկվի որևե աննպաստ պայմանների ու թուլանա մանկան մարմնի ինքնապաշտպանողական ուժը, իսկույն և յեթ բարակացավի բացիլները սկսում են իրենց մահաբեր գործը։

Հիվանդ յերեխաները սկսում են ջերմել, նիհարել, գունատվել, ախորժակը ընկնում է, գիշերները քրտնում են ու վերջապես աչքի է ընկնում յերեխաների հազը, որը նմանում է հաչոցի. այդպիսի հազը շատ անգան շփոթում են կոկլուշի (կապտահազի) հետ, բայց հիվանդի հետ մոտիկ ծանոթանալը փարատում է կասկածները, և համոզվում յերեխայի բարակացավով հիվանդ լինելուն— *ցինցղային* (бронхиальные железы) *գեղձերի ուռած լինելու պատճառով*, այդ դեպքում մանկան շնչառությունը շատ դժվար է կատարվում։ Շատ անգամ պատահում է որ ծնոտի և վզի գեղձերը ուռչում են, բորբոքվում, թարախակալում և բացվում. իսկ յերբ թարախից մաքրվում են, վզի ու ծնոտի վրա թողնում են սպի (рубец)։

Վոսկրային բարակացավ

Այդ ձևի վարակումը թեև հիվանդի համար ավելի թեթև է անցնում, վոր մահացու հետևանք չի ունենում, բայց և այնպես մանկանը այլանդակում է ու շատ հաճախ անդամալույծ է դարձնում մինչև կյանքի վերջը. բոլոր կուզիկները, կաղերի մեծ մասը, կամ ծուռ ձեռքերով անդամալուծները, սրանք բոլորը զոհ են վոսկրային բարակացավի, վորով վարակված են յեղել մանկական հասակում։

Կուզիկ յերեխան, վոսկրային բարակացավով հիվանդանալու հետևանքով։

Մեծ մասամբ վոսկրի բարակացավը սկսվում է վոտքերի ու ձեռքերի խաղերի բորբոքումից, վորոնք թարախակալում են ու յերկար ժամանակ թարախը կանգ չի առնում և վոսկորը վերքի սահմաններում քանի դնում փըխրանում, փշրվում է ու յերբ արդեն բորբոքումը անցնում է և թարախը կանգ է առնում, այդ ժամանակ արդեն ձեռքի կամ վոտքի հիվանդ խաղերը կորցնում են իրենց նորմալ ձևը և աշխատազուրկ են լինում։

Թոքերի բարակացավը

Մահաբեր ու վտանգավոր է թոքախտը մանկական հասակում յերբ բարակացավը. թոքերի բորբոքումն է առաջ բերում ու թոքերը կարճ ժամանակամիջոցում կարծես թե բարակացավի բացիլների ավերիչ գործունեությունը տակ այրվում են, հիվանդ յերեխան շատ դժվարությամբ է շունչ քաշում։ Հազում է, խորխը անագին քանակությամբ բարակացավային բացիլներ է պարունակում. տաքությունը հասնում է բարձր աստիճանի։

Վոսկրային բարակացավի հետևանքով յերեխայի վոտքի փրչացումը։

Աղիքների բարակացավը

Վոչ պակաս մահաբեր ու քայքայիչ է աղիքների բարակացավը։

Մարսողության գործարանների բարակացավը բնվորոշում են ստամոքսային խանգարումները, վորոնք շատ անգամ առաջ են բերում բարակացավային վերքեր աղիքներում։ Սաստիկ ու անդադար լուծելը, վորը տեղի է ունենում այդպիսի վարակման դեպքերում, քամում, հալ ու մաշ է անում մանկական որգանիզմը ու շատ հաճախ պատճառ դառնում նրա մահվան։

Բարակացավային մենինգիտ

Յեթե բարակացավի բացիլները ընկնում են ընդհանուր արյան հոսանքի մեջ, այն ժամանակ բարակացավի բացիլները կանգ են առնում զանազան գործարաններում և այնտեղ բուն են դնում ու շատ հաճախ մանկական հասակում այդպիսի սերմված ու թագնված բարակացավի ընները պատճառ են լինում մանկական հասակում հազվագյուտ մահաբեր հիվանդության տուբերկուլոզային մենինգիտի, վորը իրենից ներկայացնում է ուղեղապատյանի բորբոքումը։

Ցերեխաների բարակացավի դեմ կռվելու միջոցները

Այդպես ուրեմն, մենք գտնում ենք, վոր մանկական հասակում բարակացավի տարածումը հասնում է մեծ ծավալի և հիվանդության տեսակները բազմաթիվ են.

Չնայած նրան վոր մահացողության %-ը քիչ է, բայց այդ ախտը մանկական հասակում հող է պատրաստում իր զարգացման համար ավելի մեծ հասակում։

Վորպեսզի մանուկ սերունդը ազատ պահել թոքախտի վարակումից, անհրաժեշտ է ձեռք առնել մի շարք կարևոր միջոցներ. նախ յեվ առաջ անհրաժեշտ է բարելավել ինչպես ընակչության այնպես յեվ տնտեսական ու նյութական պայմանները: Վորքան վոր մանկան սնունդը լ վ է, այնքան նրա որգանիզմը հաջող կարողանում է դիմադրել այդ ախտի ներգործման: **Միաժամանակ** անհրաժեշտ է բարելավել ընակարանային յեվ սանիտարական պայմանները, նամանավանդ մեծ քաղաքներում: Յերեխաները չպետք է ապրեն խոնավ, մութ յեվ արեգակի լույսից զուրկ ընակարաններում:

Պետք է ամեն կերպ արգելվի գետնին թքելը, կերակրելը յերեխաներին կեղտոտ ծծակով, համբուրելը մանկան բերանը յեվ վերջապես նպաստել յերեխաների ֆիզկուլտուրայով պարապելուն, վորպեսզի նրանց ֆիզիկական դրությունը ավելի ամրապնդվի։

ԲԺ. Բ. Հ. ՆԱԶԱՐՅԱՆ

Հ. Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ.Ս.Ֆ.Հ. ՊՈՂՈՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/31 1922

«Ազգային գրադարան»

7205

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՐԿ. ՅԵՐԳԻՐ. ՌՈՎԻՐՅԱՆԻ. ՄԻՆԻՑԻՐ. ԼՈՒՍԻՎՈՐ. ՅԵՆԹԻՐԻՑԻ

Главлит № 927. Тираж 500.

Թիֆլիս, ժ. Տ. Գ. Ի. Պոլիգր. Տր. 4-րդ ապ., Պաշկին. փ. № 3